

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ
ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ՀԱՅՈՒՆԱՐԴԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՏԴ 373:941:(479.25)
ԳՄԴ 74.2+63.3(2h)
Հ 282

Պատասխանատու՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՍՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի հայոց պատմության ամբիոններին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագործին անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարրերակում:

Հ 282 Հայոց Պատմություն : Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց:
Գնահատման և թեստավորման կենտրոն, 2014. 48 էջ:

ISBN 978-9939-805-67-2

ԳՄԴ 74.2+63.3(2h)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	4
Թեստի կառուցվածքը	5
Առաջադրանքների կառուցվածքային տեսակները.....	7
Թեստային առաջադրանքներում ընդգրկվող նյութը.....	26
Պատասխանների ձևաթղթի նմուշը	46
Հանձնարարվող գրականություն	47

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստի նոր կառուցվածքը, արված են առաջադրանքների թեմատիկ, բուվանդակային և կառուցվածքային տեսակների համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաբղում լրացման կարգի բացադրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաբուղը և պատասխանի գնահատման չափանիշները:

Հայոց պատմության շտեմարանները, պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմվելու են համաձայն ուղեցույցի:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և ներառում է 70 առաջադրանք:

Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին: Ավարտական մասը գնահատվում է հատուկ ավարտական մասի համար նախատեսված 20 միավորանոց սանդղակով, որը տեղակայված է Գ.ԹԿ կայք էջում՝ atc.am: Միասնական քննությունը ներառում է Ա և Բ մակարդակները:

Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ճիշտ պատասխանին՝ առավելագույնը 6 միավոր:

Թեստի ընդհանուր միավորը 80 է:

Ստորև ներկայացված է առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը:

Առաջադրանքների բովանդակային տիպերը	Կառուցվածքային տիպերը					
	Ա մակարդակ			Բ մակարդակ		
	Ընտրովի պատասխ անով	Կարճ պատ ասխա նով	պնդո վների փունջ	Ընտրով ի պատաս խանով	Կարճ պատ ասխա նով	պնդո վների փունջ
1	Տարեթվերի իմացություն	10 (1-8, 28- 29)	---		---	---
2	Փաստերի և երևոյթների իմացություն	10 (9-16, 30-31)	---		---	---
3	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	4 (17-18, 32-33)	---		---	---
4	Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն	3 (19-20, 34)	1 (39)		2 (46- 47)	1 (60)
5	Պատմական իրադարձությունների և երևոյթների պատճառների ու հետևանքների իմացություն	3 (21-22, 35)	1 (40)		3 (48-49, 56)	2 (61- 62)
6	Պատմական իրադարձությունների և երևոյթների ժամանակագրական հաջորդականության իմացություն	4 (23-24, 36-37)	2 (42- 43)		3 (50- 52)	3 (65- 67)
7	Պատմական իրադարձությունների, երևոյթների, փաստերի, տարեթվերի, կրթաշակուրային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում	3 (25-26, 38)	1 (44)		2 (53, 57)	2 (68- 69)
8	Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում	1 (27)	1 (41)	1 (45)	4 (54- 55, 58-59)	2 (63- 64)
						1 (70)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քննական թեստի առաջադրանքների պահանջները ձևակերպվում են հարցերի կամ հանձնարարությունների ձևով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքները երկու տիպի են և ունեն կատարման տարբեր եղանակներ:

Առաջին տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում պահանջից հետո կարող են տրված լինել պատասխանի համարակալված՝ հինգից մինչև ինը տարբերակ (պնդումներ, բացատրություններ, տերմիններ, իրադարձություններ և այլն), որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան(ներ)ը: Ա մակարդակում տրված են հինգ կամ վեց համարակալված տարբերակներ, որոնցից ճիշտ են մեկը կամ երկուսը: Այն առաջադրանքում, որտեղ ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից միայն մեկը, պետք է նշել միայն դա: Այն դեպքում, եթե ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից երկուսը, պետք է երկուսն էլ գրանցել, հակառակ դեպքում տվյալ առաջադրանքի պատասխանը կհամարվի սխալ:

Բ մակարդակում առաջին տիպի կարճ պատասխանով առաջադրանքներում ճիշտ են պատասխանի համարակալված յոթից մինչև ինը տարբերակներից երկուսը կամ երեքը: Այդ դեպքում, կախված առաջադրանքից, անհրաժեշտ է գտնել և գրանցել պատասխանի երկու կամ երեք ճիշտ պատասխանները: Ոչ ամբողջական կամ սխալ պատասխանների, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Ա մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում 5 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ճիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում 6 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ

տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ծիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքերում միավոր չի տրվում:

Պնդումների փունջ առաջարանքները թեստերում երկուսն են (մեկական Ա և Բ մակարդակներում): Դրանք ներկայացված են հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տրվի առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ծիշտ է», «Սխալ է» կամ «Զգիտեմ», մեկը: Այս առաջարանքից հետո առաջարկվոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Քննական թեստի առաջարանքները կատարելուց հետո քննություն հանձնողը ճիշտ պատասխանները պետք է գրանցի պատասխանների ձևաթրում: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթրութը:**

Բացի պնդումների փնջից՝ բոլոր առաջարանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը, ոչ ամբողջական պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0:

Ստորև ներկայացված են թեստային առաջարանքների նմուշներ, դրանց կատարման վերաբերյալ բացատրություններով:

Ա մակարդակ

1. Տարեթվերի իմացություն

Այս առաջարանքները միայն ընտրովի պատասխանով են: Զնակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարրերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ե՞ր է Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանը հաստատվել Երևանի նահանգի դիկտատոր:

- 1) 1917 թ. դեկտեմբերին
- 2) 1918 թ. մայիսի 28-ին
- 3) 1918 թ. մարտի 24-ին
- 4) 1915 թ. մայիսի 7-ին

Այս և ընտրովի պատասխանով մյուս առաջարանքներին պատասխանելիս՝ քննություն հանձնողը համապատասխան համարի առաջարանքի սյունակի չորս վանդակներից մեկում պետք է դնի «X»

նշանը: Օրինակ, եթե քննություն հանձնողը 8-րդ առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա դա պետք է գրանցի հետևյալ ձևով՝

Պատահամացի համարը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1																				1	
2																				2	
3																				3	
4																				4	

Եթե քննություն հանձնողը ընտրովի պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը» հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.**

3	3
1	
2	
3	X
4	

2. Փաստերի և երևոյթների իմացություն

Այս առաջադրանքները նույնապես միայն ընտրովի պատասխանով են: Զեակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարրերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ո՞վ էր ստանձնել Զեյթունի 1862թ. ապստամբության ընդհանուր ղեկավարությունը:

- 1) Ալբարիչ Յաղությանը
- 2) Նազարեթ Չավուշը
- 3) Գարուն Աղասին
- 4) Պապիկ Ենի-Տունյանը

3. Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

Այս առաջադրանքները ևս միայն ընտրովի պատասխանով են: Ներկայացված է պահանջը, սկզբնաղբյուրային մեջբերումը, և տրվում է պատասխանի չորս տարրերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եքե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ուստի երին փոխարինելու համար... Մենակ ենք և պետք է ապավիճնենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

Ո՞վ է ներկայացված խոսքերի հեղինակը:

- 1) Սիմոն Վրացյանը
- 2) Արամ Մանուկյանը
- 3) Գարեգին Նժդեհը
- 4) Անդրանիկ Օզանյանը

4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տիպի են:

Հնատրովի պատասխանով՝ առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս տերմին և հասկացություն, կամ տերմինի և հասկացության չորս բացատրություն: Պատասխանի չորս տարրերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ինչպես էին անվանում արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարին Արշակունիների օրոք:

- 1) Մարդպետ
- 2) Սպարապետ
- 3) Մաղիսազ
- 4) Ոստանիկ

Կարծ պատասխանով՝ առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են տերմինների կամ հասկացությունների բացատրության 5-6 տարրերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի երկու տարրերակների համարները:

Օրինակ՝
Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացարձրությունները.

- 1) Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանության ու շուկաներին հետևող հասուկ պաշտոնյան կոչվում էր շահապ:
- 2) Հայրեկ արարերեն նշանակում է տասնապետ:
- 3) Օսմանյան կայսրությունում ազգեցություն ձեռք բերելու և նրանից զանազան զիջումներ կորզելու նպատակով Եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը:
- 4) Կիլիկիայում XIII դարի սկզբներին ստեղծված պաշտպանական ամրությունները կոչվել են սղնախնդիր:
- 5) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է «Հայկական ազգային կոմիտե» կամ Հայ Դատի հանձնախումբ:

Այս տիպի կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պատասխան(ներ)ը պետք է գրանցի նախատեսված հորիզոնական վանդակներում՝ ցանկացած հաջորդականությամբ: Հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան: Օրինակ, եթե 61-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանն է 3 և 5, ապա այն պետք է գրանցել այս ձևով՝

39	3	5
40		
41		
42		

Նույն առաջադրանքի պատասխանը կարելի է գրանցել նաև թվանշանների այլ հաջորդականությամբ: Օրինակ՝

39	5	3
40		
41		
42		

Եթե քննություն հանձնողը կարծ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղում «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.

Մուլտիպլիքատուրա Ձևականացնելու	3	9		4	5							

5. Պատմական իրադարձությունների և երևոյթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Հնտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորսից մինչև վեց պնդում կամ փաստարկ: Պատասխանի չորս տարրերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Ինչո՞վ էր պայմանավորված Վանի թագավորության և Ասորեստանի հարաբերությունների մերձեցումը Արգիշտի II-ի օրոք:

- 1) Երկու պետություններում էլ արդեն իշխում էին նույն արքայատիկմի ներկայացուցիչներ:
- 2) Նրանք արդեն սահմանակից պետություններ չեն:
- 3) Արգիշտի II-ն ընդունել էր Ասորեստանի գերիշխանությունը:
- 4) Նրանց համար հանդես էին եկել նոր վտանգավոր հակառակորդներ:

Կարծ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացված են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարը:

Օրինակ՝

Խորհրդային կառավարությունը 1953թ. մայիսին պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի, որովհետո՝

1) Թուրքիան դարձել էր ԽՍՀՄ-ի դաշնակիցը:

2) Ակավել էր սառը պատերազմը:

3) Ստալինը խուսափեց Թուրքիայի հետ ռազմական բախումից:

4) Ստեղծվել էր Հյուսիսատլանտյան դաշինքը և Թուրքիան անդամակցել

Էր դրան:

5) Վարչավյան դաշինքի երկրները չաջակցեցին խորհրդային պետությանը այդ հարցում:

6. Պատմական իրադարձությունների և երևոյթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Հնտորովի պատասխանով՝ առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 4-6 անունների կամ իրադարձությունների շարք, ինչպես նաև պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

Բազրատունի արքաներին դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության:

ա) Աշոտ Ողորմած բ) Գագիկ I գ) Աշոտ Երկաք դ)

Մմրատ II

1) գ, դ, ա, բ

2) գ, ա, դ, բ

3) ա, գ, դ, բ

4) ա, բ, գ, դ

Oրինակ՝

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը:

- ա. Հայաստանի Ժողկոմիտորիի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի մահը:
- բ. ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիայի ձերբակալությունը
- շ. Ահավոր սովոր Խորհրդային Սիությունում:
- դ. Խորհրդագերմանական չհարձակման մասին պայմանագրի կնքումը:
- ե. Խորհրդային Սիության ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմի սկիզբը:
- զ. Երկրորդ աշխարհամարտի սկիզբը:

1) ե

2) դ

3) զ

4) բ

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարրերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի համարը:

Օրինակ՝

Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը:
- 2) Աշոտ Մսակերի նատավայրի տեղափոխումը Դարույնքից Բագարան:
- 3) Նկան ամրոցի հերոսական դիմադրությունն Աշոտ Արծրունու գլխավորությամբ:
- 4) Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու կառավարման սկիզբը:
- 5) Հովհանն Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունի եղբայրների գլխավորությամբ արաբների ոչնչացումը Տարոնում:

Այս տիպի առաջադրանքներից մեկը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 5 անունների կամ իրադարձությունների շարք: Պատասխանի լրացման համար տրվում է համապատասխան քանակությամբ դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է

լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Թեստ-գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Խառանի ճակատամարտը
- 2) Կրասոսի ժամանումը Արևելք
- 3) Ակցիոնի ճակատամարտը
- 4) Արտավազդ II -ի գերեվարումը
- 5) Առաջին եռապետության ստեղծումը

5
2
1
4
3

Ձևաբղում պատասխանը պետք է լրացվի պատասխանի նույն հերթականությամբ՝յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:



Եթե քննություն հանձնողը կարծ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաբղում «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը**» հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.



7. Պատմական իրադարձությունների, երևոյթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տիպի առաջադրանքները ընտրովի և կարճ պատասխանով են:

Ընտրովի պատասխանով առաջադրում պահանջից հետո ներկայացված են պատմական իրադարձությունների, երևոյթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շաբթեր (առաջին շաբթում ընդգրկվում են չորսից հինգ, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարրերակ:

Պետք է ընտրել պատասխանի չորս տարրերակներից միայն մեկը:

Օրինակ՝

Կրթական հաստատությունները համապատասխանեցնել դրանց հիմնադրման վայրերի հետ:

- | | |
|-----------------------|--------------|
| 1) Աղաքարյան դպրոց | ա) Մոսկվա |
| 2) Մերոպյան դպրոց | բ) Աստրախան |
| 3) Մարդասիրաց ճեմարան | գ) Զմյուռնիս |
| 4) Ալյուտարի դպրոց | դ) Կ.Պոլիս |
| | ե) Կալկարա |

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-ը, 2-ե, 3-ա, 4-դ | 3) 1-ը, 2-զ, 3-ե, 4-դ |
| 2) 1-ա, 2-դ, 3-զ, 4-ե | 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-ը |

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացված են պահանջը և երեք սյունակից բաղկացած աղյուսակ, տրվում է դրանց համապատասխանեցմամբ կազմված պատասխանի չորս տարրերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարրերակը):

Օրինակ՝

Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
---	-----------------	---	----------	---	---------

1	Վանի ինքնապաշտապանության սկիզբը	1	1895 թ. հոկտեմբեր	1	Նիկոլ Դուման
2	Խանասորի արշավանքը	2	1894 թ. օգոստոսի վերջ	2	Սկրտիչ Ավետիսյան
3	Զեյթունի ապատամ- բության սկիզբը	3	1896 թ. հունիսի 3	3	Մեծն Մուրադ
4	Սասունի հերոսամարտի ավարտը	4	1897 թ. հուլիսի 25	4	Աղասի
		5	1890 թ. հուլիս	5	Անդրամիկ

1	3	2
2	4	1
3	1	4
4	2	3

1	3	2
2	5	5
3	1	4
4	4	3

1	3	1
2	1	2
3	4	3
4	2	4

1	2	2
2	4	1
3	3	4
4	1	5

Կարճ պատասխանով առաջադրանքը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. ձևակերպումից հետո տրված են պատմական իրադարձությունների, երևոյթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարք (առաջին շարքում ընդգրկվում են հինգ (համարակալված է տառերով), իսկ երկրորդում վեց (համարակալված է թվերով)՝ բաղադրիչ, և տրված են տառերով համարակալված և զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել տվյալ տառի բաղադրիչին համապատասխանող բաղադրիչի թիվը:

Թեստային գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

Հայ հոգեոր գործիների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ.

ա)Հովհաննես Բ Գաբրելենացի

ա	
թ	
զ	

- թ) Ներսես Գ Տայեցի
 զ) Հովսեփ Ա Վայոցձորցի
 դ) Ներսես Ա Պարթև
 ե) Հովհաննես Ա Մանդակունի

դ	
ե	

- 1) 571–572 թթ. ապստամբությունը
- 2) Վարդանանց պատերազմը
- 3) Աշտիշատի ժողովը
- 4) Վահանանց պատերազմը
- 5) Դվինի 506 թ. եկեղեցական ժողովի գումարումը
- 6) Զվարթնոցի տաճարի կառուցումը

ա	1
թ	6
զ	2
դ	3
ե	4

Զևաթղում պետք է լրացվեն միայն աջ կողմի սյունակի թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:



Եթե քննություն հանձնողը կարծ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ և ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղում «*Սխալ նշան պատասխանները փոխելու տեղը*» հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.



8. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

Հստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջից հետո ներկայացված են 4 – 6 պատմական փաստարկներ կամ պնդումներ: Պատասխանի 4 տարրերակներից միայն մեկն է ճիշտը:

Օրինակ՝

Գտնել երկու ճիշտ պնդումները.

ա. Վռամշապուհ արքան առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու հայոց կարողիկոս է նշանակում Սահակ Պարթևին՝ փորձելով միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

բ. Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կարողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն իրազործում է մշակութային դարակազմիկ իրադարձություն՝ ստեղծում է Հայոց այրութենությունը:

գ. Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք ու ստանում Վռամ Ա-ի համաձայնությունը իր փեսա Համազասպ Մամիկոնյանին Հայոց սպարապետ նշանակելու մասին:

դ. Հայ նախարարների խնդրանքով պարսից թագավոր Հազկերտ I-ը Վռամշապուհի մահից հետո Հայոց թագավոր է հաստատում Վռամշապուհի որդի Շապուհին:

ե. Վռամշապուհ արքային չի հաջողվում օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից և միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

1) ա, բ

2) բ, գ

3) գ, դ

4) դ, ե

Կարճ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացված են պատասխանի համարակալված 5-6 տարրերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարրերակների համարները:

Օրինակ՝

Ընտրել երկու ճիշտ պնդումները:

1) Սան Ստեֆանոյի հաշտությամբ Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կարինի, Վանի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաքում նավահանգստով:

- 2) Վաս քաղաքի մտավորականության գաղափարական ներշնչողներն են եղել Սկրտիչ Խրիմյանը, Սկրտիչ Փորբուզայանը և Սկրտիչ Ավետիսյանը:
- 3) «Հայասեր-ազգաներ» խմբակը գաղտնի կերպով տպագրել է «Ազատության ավետարեր» թերթը:
- 4) Բեռլինի պայմանագրով Բարումն ու Բայազետի գավառը վերադարձեցին Օսմանյան կայսրությանը:
- 5) Հնչակյանների ազգային թևը Ա. Նազարբեկյանի գլխավորությամբ հեռացել է կուսակցությունից և հանդես է եկել Վերակազմյա հնչակյաններ անունով:
- 6) Սայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

Պնդումների փունջը ներկայացվում է հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք տեսակի պատասխաններից՝ «Ծիշտ է», «Սխալ է» կամ «Զգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված ճիշտ է կամ Սխալ է պատասխանի համար քննություն հանձնողը վաստակում է մեկական միավոր: «Զգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «Ծիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը կորցնում է (առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է) մեկական միավոր: Եթե վաստակած և կորցրած միավորների քանակը հավասար է, կամ կորցրած միավորների թիվը գերազանցում է վաստակած միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

Զնարդում լրացման կարգը. տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել <> նշանը:

45	1	2	3	4	5	6
ճիշտ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Սխալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Եթե քննություն հանձնողը պնդումների փնջում պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում «**Սխալ ճշված պատասխանները փոխելու տեղը» հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.**

7	0	1
Պնդումների փումը	<input type="checkbox"/>	
ճիշտ է		<input type="checkbox"/>
Սխալ է	<input checked="" type="checkbox"/>	
Չգիտեմ	<input type="checkbox"/>	

Նմուշ: 45. Բերված փաստարկերից որո՞նք են սխալ.

45-1. 1829 թ. հունիսի 24-ին Ի. Պատկեհչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավում են Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան Կալան:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-2. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը ստեղծվել է 1882 թ. Խաչատոր Կերեքցյանի ջանքերով:

- ա) ճիշտ է բ) սխալ է գ) չգիտեմ

45-3. Ժողովրդավարական հեղափոխությունը Ուսաստանում սկսվեց 1905 թ. հունվարի 9-ին Պետերբուրգում քանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ:

ա) ճիշտ է թ) սխալ է զ) չգիտեմ

45-4. 1917 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

ա) ճիշտ է թ) սխալ է զ) չգիտեմ

45-5. 1917 թ. Վանի մարզի տեղական զինված խմբերը դեկավարում էին Լևոն Շաղոյանը և Բոլդարացի Գրիգորը

ա) ճիշտ է թ) սխալ է զ) չգիտեմ

45-6. Հրայրը ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Մշն Ս. Կարապետ վանքի դպրոցում:

ա) ճիշտ է թ) սխալ է զ) չգիտեմ

«Ամբողջ ձևաբուժության փոխված պատասխանների քանակը» բաժնի վանդակում անհրաժեշտ է գրել փոխված պատասխանների քանակը՝ 1, 2, 3, 4 կամ 5, իսկ եթե ոչինչ չի փոխվել՝ 0:

Բ մակարդակ

4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Հնորովի պատասխանով՝ առաջադրանքները կարող են ներկայացվել երկու ձևով:

Առաջին՝ պահանջի ձևակերպումից հետո ներկայացված են 5-9 համարակալումով՝ տերմինների կամ հասկացությունների բացարությունները։ Պատասխանի չորս տարրերակներից միայն մեկն է ճիշտ։

Այս տիպի առաջադրանքների մյուս խումբը կարող է ներկայացվել նաև համապատասխանության ձևով։ Տրված են 4-9 տերմիններ կամ հասկացություններ և դրանց բացարության վերաբերյալ մեկով ավելի տարրերակներ։ Պատասխանի տրված չորս տարրերակներից միայն մեկն է ճիշտ։

Կարծ պատասխանով՝ առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացված են պատասխանի համարակալված 7-9 տարրերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երեք տարրերակների համարները։

5. Պատմական իրադարձությունների և երևոյթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Հնորովի պատասխանով՝ առաջադրանքներում՝ պահանջի ձևակերպումից հետո ներկայացված է 7-10 պնդում կամ փաստարկ։ Տրվում են պատասխանի 4 տարրերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ։

Կարծ պատասխանով՝ առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացված են պատասխանի համարակալված 7-9 տարրերակներ, որոնցից միայն մետք է ընտրել երեք ճիշտ պատասխանի համարները։

6. Պատմական իրադարձությունների և երևոյթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Հստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացված է 7-10 անունների կամ իրադարձությունների շարք, և տրվում է պատասխանի չորս տարրերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Կարծ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո տրված է անունների կամ իրադարձությունների 7-9 շարք: Պետք է ընտրել բոլոր այն տարրերակների համարները, որոնք խախտում են շարքի հաջորդական ճիշտ դասավորությունը:

Այս տիպի առաջադրանքներից երկուուր թեստում պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 6 անունների կամ իրադարձությունների շարք, այնուհետև տրվում է համապատասխան քանակությամբ դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Զևաթղում պատասխանը պետք է լրացվի պատասխանի նույն հերթականությամբ՝յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

7. Պատմական իրադարձությունների, երևոյթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տիպի ընտրովի պատասխանով առաջադրանքների ձևակերպումից հետո ներկայացված են պատմական իրադարձությունների, երևոյթների, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների 2 շարքեր (առաջին շարքում կարող են ընդգրկվել վեցից մինչև տասը, իսկ երկրորդում՝ մեկով ավելի քաղաքակիշներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի 4 տարրերակ: Պատասխանի 4 տարրերակներից միայն մեկն է ճիշտ:

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և 4 այունակից բաղկացած աղյուսակ, և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի 4 տարրերակ: Հստ աղյուսակի առաջին այունակի հերթականության՝ պետք է

կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

Կարծ պատասխանով առաջադրանքները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. ձևակերպումից հետո ներկայացված են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարերվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների 2 շարքեր. (առաջին շարքում ընդգրկվում են 6 (համարակալված է տառերով), իսկ երկրորդում՝ մեկով ավելի (համարակալված է թվերով) բաղադրիչներ, և տրված է տառերով համարակալված և զուգահեռարար դատարկ վանդակներ։ Դատարկ վանդակներում պետք է լրացնել տվյալ տառի բաղադրիչին համապատասխանող բաղադրիչի թիվը։

Ձևարդում պետք է լրացվեն միայն աջ կողմի այունակի թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով։

8. Պատմական փաստարկների, պնդումների համարում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

Հնորովի պատասխանով առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացված է 7-10 պատմական փաստարկների կամ պնդումների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ։

Կարծ պատասխանով առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացված են պատասխանի 7-9 համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել երեք ճիշտ պատասխանի համարներ։

Պնդումների փունջը ներկայացվում է հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք տեսակի պատասխաններից՝ «Ճիշտ է», «Մխալ է» կամ «Չգիտեմ», մեկը։ Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր։

Գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված ճիշտ է կամ Մխալ է պատասխանի համար քննություն հանձնողը վաստակում է մեկական միավոր։ «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում։ Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Մխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը կորցնում է (առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է) մեկական միավոր։ Եթե վաստակած և կորցրած միավորների քանակը հավասար է, կամ կորցրած

միավորների թիվը գերազանցում է վաստակած միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը զնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

Զևաբղում լրացման կարգը. տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել <> նշանը:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ(բովանդակային դասիչ)

Թեստում ընդգրկված առաջադրանքները ներառելու են «Հայոց պատմություն» առարկայի 2008 թ. ծրագրի հիման վրա ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Մելքոնյանի և Ա. Սիմոնյանի խմբագրությամբ լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտանարենատիկական հոսքերի 10-12-րդ դասարանների դասագրքերում ամփոփված նյութը:

Դասագրքերում առանձին դեպքերում առկա են որոշ տարրերություններ բուն տեքստերում օգտագործված տարեթվերի և գործի վերջում զետեղված «Ժամանակագրություն» խորագրով ցանկերի միջև: Տարրներումների տեղիք չտալու համար ժամանակագրական բնույթի բեստային առաջադրանքներին պատասխանելիս պետք է հիմք ընդունել բացառապես դասագրքերի բուն տեքստերում տեղ գտած տարեթվերը, եթե դրանք վրիպակներ չեն (տես՝ «Դասագրքերում առկա վրիպակներ» բաժինը):

ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ներածություն

Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաշխարհագրական պայմանները

Հայկական լեռնաշխարհի դիրքը: Խոշոր գետերը: Վարչական բաժանումը:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայոց ծագումնաբանությունը

Հայոց ծագումնաբանության հարցը: Հնդեվրոպական նախահայրենիքը: Հայոց ծագումնաբանության վերաբերյալ ավանդազրույցները: Հայերի ծագման հարցը արդի պատմագիտության մեջ:

Վաղ պետական կազմավորումները (Ք. ա. III հազարամյակ - Ք. ա. I հազարամյակի սկիզբ)

Հայկազունների Այրարատյան թագավորությունը:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՍՏԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վանի համահայկական թագավորությունը

Վանի թագավորության կազմավորումն ու հզորացումը: Արգիշտի I: Տուշպա (Տոսա, Վան) մայրաքաղաքի հիմնումը: Իշպուհնիի գահակալությունը: Թագավորության հզորացումը Մենուայի գահակալության շրջանում: Արգիշտի I:

Վանի տերությունը Սարդուրի II-ի և նրա հաջորդների օրոր: Թագավորության անկումը: Սարդուրի II. Չորս ծովերի տերությունը: Ասորեստանի դիրքերի ամրապնդումը: Վանի թագավորությունը Ք.ա. VIII դարի վերջին և Ք.ա. VII դարի առաջին կեսին: Թագավորության անկումը:

Վանի թագավորության պետական կարգը և բանակը: Պետական կարգը: Հայկական պետականության զարգացումը: Բանակը:

Հայկազուն-Երվանդականների թագավորությունը

Հայաստանը Ք. ա. VII դարավերջից մինչև Ք. ա. 330-ական թվականները: Սկայորդի և Պարույր Հայկազուններ: Հայկազուն-Երվանդականների թագավորությունը Ք. ա. VI դարում: Բնիհարթունյան

արձանագրությունը Հայաստանի և հայերի մասին: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:

Հայոց բազավորությունները Ք. ա. 331-201 բվականներին: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը: Հայկական բազավորությունները և Սելևկյան տերությունը:

Հայկազուն-Երվանդականների բազավորության պետական կարգը: Պետական կարգը: Թագավորության տարածքը, վարչական բաժանումը և բանակը:

Մեծ Հայքի Արտաշեսյանների բազավորությունը

